

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԸՆՏՐԵԼ Է ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Սեպտեմբերի 27-ին կայացավ Բարձրագույն դատական խորհրդի հերթական նիստը: Օրակարգում ընդգրկված հարցերի քննարկումից զատ՝ Խորհուրդն անցկացրեց Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահի ընտրություն:

Առաջնորդվելով «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածով՝ Խորհուրդն անցկացրեց փակ գաղտնի քվեարկություն, որի արդյունքում ներկայացված թեկնածուներից ոչ ոք չստացավ բավարար ձայներ:

Կազմակերպվեց լրացուցիչ քվեարկություն առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուների՝ Ռուզաննա Հակոբյանի և Գոռ Հակոբյանի միջև:

Խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքում՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահ ընտրվեց Ռուզաննա Հակոբյանը:

Դատական դեպարտամենտի մամուլի և հասարակայնության հետ կապերի ծառայություն